

**2025-2027թթ. ՄԺԾԾ (ՆԵՐԱՌՅԱԼ ՀՀ 2025թ.
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ)
ՀԱՅՏԻ**

**2025-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ
ԾՐԱԳՐԻ ԵՎ ՀՀ 2025 ԹՎԱԿԱՆԻ
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ**

Պետական մարմինը՝

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով

**Հայտի հաստատման
ամսաթիվը՝**

07 մարտի 2024թ.

1. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

2025-2027 թվականների պետական ՄԺԾԾ և 2025 թվականի պետական բյուջեի (այսուհետ՝ Նախագիծ) միջնաժամկետ ծախսերի ծրագրով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նպատակն է կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության միասնական համակարգի արդյունավետ կիրառման ապահովումը:

Նախագիծը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363 - Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրից (տես «Իրավունք և արդարադատություն» 5-րդ բաժնի, 5.5 ենթակետի «Կոռուպցիայի դեմ պայքար»), ՀՀ Կառավարության 22 դեկտեմբերի 2022 թվականի N 2117 – Լ որոշմամբ սահմանված Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրից (տես Արդարադատության նախարարություն, նպատակ 16 Կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարության իրագործում), ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1871-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունից և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրից, ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի N 1133 - Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունից և դրանից բխող գործողությունների ծրագրից (տես Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարություն, Քննչական մարմինների համակարգի բարեփոխում վերնագրի ներքո, գործողությունների ծրագիր՝ նպատակ 5. Քրեաիրավական ոլորտի բարեփոխումներ), ՀՀ Կառավարության 13 մայիսի 2022 թվականի N 691-Լ որոշմամբ հաստատված Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարությունից և դրա 2022-2024 թվականների ճանապարհային քարտեզը և արդյունքային շրջանակը, ռազմավարության իրականացման հսկողությունն ու համակարգումն ապահովող անձանց ցանկից: Նախագիծը հիմնված է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի, «Հանրային ծառայության մասին» օրենքի, «Դատական օրենսգիրք» Սահմանադրական օրենքի, «Կուսակցությունների մասին» Սահմանադրական օրենքի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններից, մասնավորապես՝ ՀՀ Կառավարության և Եվրոպական Հանձնաժողովի միջև առկա բյուջետային աջակցության ֆինանսավորման համաձայնագրից (տես Support to Justice Sector Reforms in Armenia Phase II), ՀՀ Կառավարության և Համաշխարհային բանկի «Զարգացման քաղաքականության գործառնություն» («DPO») բյուջետային աջակցության (Կանաչ, դիմակայուն և

ներառական զարգացման քաղաքականության գործառնության համար, Հենասյուն 3. Հանրային հատվածի կառավարման և արդյունավետության բարելավում՝ ի աջակցություն տնտեսական աճի, Նվերների հաշվառում), Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) 4-րդ և 5-րդ փուլի գնահատումների, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) 5-րդ փուլի շրջանակներում Հայաստանի Հանրապետությանը ներկայացված առաջարկությունների և հանձնարարականների վրա:

Սույն միջնաժամկետ ծրագրի հիմնական թիրախներն են.

1.Օրենսդրական փոփոխությունների իրականացում, կանխարգելման գործող կառուցակարգերի կատարելագործումը,

2.Կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ հանրային իրազեկման և կրթական ծրագրերի շարունակական իրականացումը,

3.Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կարողությունների շարունակական զարգացումը

4.Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործունեության հաշվետվողականության ապահովումը,

5.Կոռուպցիայի կանխարգելման հիմնական գործիքների թվայնացումը, արհեստական բանականության միջոցով տվյալների վերլուծությունը:

Ակնկալվում է նշված թիրախների միջոցով նպաստել միջազգային ոլորտային կազմակերպությունների կողմից (Թրանսփարենսի ինթերնեշնլ կոռուպցիայի ընկալման համաթիվ, Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) 4-րդ և 5-րդ փուլի գնահատումներ, ինչպես նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության գնահատում) Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ոլորտի առնչությամբ տրված ցուցանիշների (գնահատականների) բարձրացմանը:

Սույն ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է կոռուպցիայի կանխարգելման արդյունավետ մեխանիզմների, այդ թվում՝ բարեվարքության կառուցակարգերի ներդրման միջոցով նպաստել հանրային կառավարման մարմիններում, պետական և համայնքային մասնակցությամբ կազմակերպություններում կոռուպցիայի նվազմանը, ինչպես նաև բարձրացնել կոռուպցիայի նկատմամբ հանրային զգայունակությունը: Այս վերջնարդյունքը բխում է ՄԱԿ-ի «Կայուն զարգացման 2030 օրակարգում» ներառված կայուն զարգացման նպատակների և դրանց գծով սահմանված գլոբալ

ցուցանիշներից, մասնավորապես՝ նպատակ 16.5 էապես կրճատել կոռուպցիան և կաշառակերությունը իրենց բոլոր ձևերով:

2. ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Սույն միջնաժամկետ ծախսերի ծրագրով Հանձնաժողովի կողմից իրականացվող բյուջետային ծրագիրն ուղղված է Կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության միասնական համակարգի արդյունավետ կիրառման ապահովմանը: Ծրագրի նպատակն է՝ նպաստել կոռուպցիայի կանխարգելման համակարգի զարգացմանը և հանրային ինստիտուտների նկատմամբ հասարակության վստահության բարձրացմանը: Հանձնաժողովը 2025-2027 թվականներին ապահովելու է բարեվարքության համակարգի տարրերի շարունակական կիրառումը:

Այս համատեքստում նախատեսվում է առկա օրենսդրական և գործնական խնդիրների գնահատման, վերհանված բացերի հիման մեկ միասնական օրենքի շրջանակներում նախատեսել բարեվարքության համակարգի տարրերին վերաբերելի բոլոր իրավակարգավորումները: Նշվածի առումով Հանձնաժողովն ապահովելու է նաև շահերի բախման, այլ սահմանափակումների, անհամատեղելիության պահանջների պահպանման վերահսկման արդյունավետ մեխանիզմների խթանումը, ինչպես նաև վարքագծի կանոնների միասնական համակարգի ներդրմանն ուղղված աշխատանքները (տես ՀՀ Կառավարության 13 մայիսի 2022 թվականի N 691-Լ որոշմամբ հաստատված Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարություն, Գործողություն 3.16. Պետական համակարգում էթիկայի և բարեվարքության համակարգի լիարժեք ինստիտուցիոնալացում, Գործողություն 3.28. Էթիկայի և բարեվարքության մոնիթորինգի ներդրում, «DPO» Հենասյուն 3. Հանրային հատվածի կառավարման և արդյունավետության բարելավում, ԳՐԵԿՈ 4-րդ և 5-րդ փուլի գնահատումներ): Այս առումով Հանձնաժողովը, ըստ սահմանած առաջնահերթությունների, իրականացնելու է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց անհամատեղելիության պահանջների մշտադիտարկում, որի հիման վրա մշակելու և հրապարակելու է ամփոփիչ զեկույց: Զուգահեռաբար, կատարելագործվելու են Հանձնաժողովի ինստիտուցիոնալ կարողությունները, վերանայվելու են Հանձնաժողովի անդամներին առաջադրվող պահանջները, վերջիններիս անկախության և պատասխանատվության շրջանակները:

2025 թվականին նախատեսվում է կատարելագործել կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանությունը, ինչպես նաև նշված մեթոդաբանության հիման վրա, ըստ սահմանած առաջնահերթության, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց մասնակցությամբ կազմակերպություններում իրականացնել ներքին կոռուպցիոն ռիսկերի գնահատում: (տես ՀՀ Կառավարության 22 դեկտեմբերի 2022 թվականի N 2117 – Լ որոշմամբ սահմանված Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիր, Արդարադատության նախարարություն, նպատակ 16 Կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարության իրագործում, տես ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1871-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը, տես ՀՀ Կառավարության 13 մայիսի 2022 թվականի N 691-Լ որոշմամբ հաստատված Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարություն, Գործողություն 3.36 Ճկուն աշխատանքային պայմանների ապահովման ընթացակարգերի ամբողջական ներդրում պիլոտի արդյունքների գնահատման հիման վրա): Նշված գնահատման արդյունքում Հանձնաժողովը նախատեսում է մշակել և հրապարակել ամփոփիչ զեկույց: Տվյալ զեկույցը հիմք կհանդիսանա հետագայում ոլորտային գործողությունների ծրագրի մշակման, ինչը կնպաստի վարչական կոռուպցիայի հաղթահարման, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց մասնակցությամբ կազմակերպություններում բարեվարքության մակարդակի բարձրացմանը: Այս վերջնարդյունքը համահունչ է ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի նպատակների հետ, մասնավորապես՝ (...)Վարչական կոռուպցիայի հաղթահարման գործում Կառավարությունը կարևորում է ռիսկերի և կարիքների վրա հիմնված քաղաքականության մշակումը: Ըստ այդմ՝ Կառավարությունը մտադիր է պետական և տեղական մակարդակում իրականացնել կոռուպցիոն ռիսկերի համապարփակ գնահատում և դրա հիման վրա մշակել միջոցառումների ծրագրեր(...):

Հանձնաժողովը վերահաստատում է, որ նշված գործընթացների շարունակական իրականացումն ու ներդրված համակարգի շարունակական բարելավումը կանխարգելիչ բնույթի աշխատանքներ են, որոնք թույլ կտան կոռուպցիոն սխեմաների արդյունավետությունը նվազեցնել կամ մոտեցնել նվազագույնի: Որպես առաջնահերթ թիրախ՝ կոռուպցիոն ռիսկերի կառավարման համակարգի ներդրումը խնդիր ունի ազդելու համակարգային կոռուպցիայի դրսևորումների վրա:

Բարեվարքության համակարգի ամրապնդման նպատակով Հանձնաժողովը կատարելագործելու է բարեվարքության ուսումնասիրության համակարգը, ինչպես նաև ընդլայնվելու է բարեվարքության ուսումնասիրություն անցնող սուբյեկտների կազմը: Մասնավորապես՝ նախատեսվում է բարեվարքության ուսումնասիրության սուբյեկտների ցանկում ներառել քննիչների թեկնածուներին և առաջխաղացման ցուցակներում ընդգրկվել հավակնող անձանց (տես *Support to Justice Sector Reforms in Armenia Phase II, Ակնկալվող արդյունք/պայմանականություն 1.1., 3.1., Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարություն, Քննչական մարմինների համակարգի բարեփոխում վերնագրի ներքո*):

Նույն ծրագրից (*Support to Justice Sector Reforms in Armenia Phase II*) և ռազմավարությունից բխող պարտավորությունների ներքո Հանձնաժողովը պարտավորություն է ստանձնել զարգացնել բարեվարքության ուսումնասիրության կառուցակարգերը, ներկա մեթոդաբանությունը, բարեվարքության ուսումնասիրության վավերապայմանները, բարձրացնել բարեվարքության ուսումնասիրության և դրա արդյունքների վերաբերյալ հաշվետվողականությունը: Կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության առնչությամբ նախատեսվում է ապահովել ինչպես կուսակցությունների տարեկան հաշվետվությունների՝ հայտարարագրման նոր էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացնելու գործընթացը, այնպես էլ կուսակցությունների մշտապես գործող ղեկավար մարմնի անդամների գույքի և եկամուտների հայտարարագրերի՝ հայտարարագրման նոր էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացման գործընթացը:

Ակնկալվում է բարեփոխված ինստիտուցիոնալ համակարգի արդյունավետ գործարկման համար ձևավորել կոռուպցիայի կանխարգելման արդյունավետ կիրառմանն անհրաժեշտ կրթական ծրագրեր, դրանք ներդնել կրթության համակարգում և ապահովել հակակոռուպցիոն մասնագիտացված կրթություն: Այս նպատակի իրագործումը ևս բխում է ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրից՝ վերահաստատելով, որ (...) կառավարությունը գիտակցում է, որ կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժողականության մշակույթ պետք է ձևավորել մանկուց: Հենց այդ պատճառով կրթության բոլոր օղակներում կներառվեն հակակոռուպցիոն կրթության վերաբերյալ կրթական ծրագրեր(...): Միաժամանակ հակակոռուպցիոն կրթության համատեքստում կարևորվում է թվային լուծումների միջոցով պարբերական կրթական ծրագրերի իրականացումը, իրազեկվածության բարձրացումը:

Նշված արդյունքների ապահովման համար էական պայման է հանդիսանում նաև բարեվարքության ապահովման և կոռուպցիայի կանխարգելման մեխանիզմների թվայնացումը: Սա ենթադրում է գործող համակարգերը՝ հայտարարագրում, բարեվարքության ուսումնասիրություն, նվերների հաշվառման ռեեստր և կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգում, միավորել, ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմամբ ալգորիթմիկ լուծումներ տվյալների մուտքագրման, մշակման, պահպանման, փոխանցման, ավտոմատացված վերլուծությունների իրականացման, ինչպես նաև հաշվետվությունների կազմման համար:

3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

1181- Կոռուպցիայի կանխարգելման համակարգի զարգացման ապահովում

3.1. Պարտադիր և հայեցողական ծախսերը

1) Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ

Հանձնաժողովի կողմից իրականացվող միջոցառումներից պարտադիր ծախսերին դասվող է համարվում 11001 - Կոռուպցիայի կանխարգելում և բարեվարքության համակարգի զարգացում միջոցառումը:

2) Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ

Հանձնաժողովի կողմից իրականացվող 11002-Կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակման և միջոցառումների իրականացման աշխատանքները համարվում են հայեցողական ծախսեր:

Ակնկալվում է բարեփոխված ինստիտուցիոնալ համակարգի արդյունավետ գործարկման համար ձևավորել կոռուպցիայի դեմ պայքարի և կանխարգելման արդյունավետ կիրառմանն անհրաժեշտ կրթական դիսցիպլիններ, դրանք ներդնել կրթության համակարգ և ապահովել հակակոռուպցիոն մասնագիտացված կրթություն:

Որպես ՀՀ Կառավարության 2021-2026 թվականների հանձնառության ապահովում՝ շարունակվելու է Հանձնաժողովին աջակցությունն իր գործառույթներն արդյունավետ իրականացնելու նպատակով՝ օրենսդրության զարգացման, անհրաժեշտ գործիքակազմի և նյութատեխնիկական պահանջների բավարարման, կարողությունների զարգացման միջոցով:

3.2. Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները

Սույն միջնաժամկետ ծախսերի ծրագրով Հանձնաժողովի կողմից իրականացվող բյուջետային ծրագիրն ուղղված է՝ Կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության քաղաքականության, նորմատիվ իրավական և ինստիտուցիոնալ կառուցվածքի զարգացմանը: Ծրարի նպատակն է՝ Նպաստել կոռուպցիայի կանխարգելման համակարգի զարգացմանը և հանրային ինստիտուտների նկատմամբ հասարակության վստահության բարձրացմանը: Ծրագրի շրջանակներում սահմանվել են հետևյալ միջոցառումները.

1. Կոռուպցիայի կանխարգելում և բարեվարքության համակարգի զարգացում,
2. Կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակման և միջոցառումների իրականացման աշխատանքներ:

3.3. Նոր նախաձեռնությունները

Սույն փաստաթղթի իմաստով նոր նախաձեռնություններ են համարվում այն ծախսային առաջարկները, որոնք վերաբերվում են գոյություն ունեցող (ՀՀ 2024-2026թթ. ՄԺԾԾ-ով կամ «ՀՀ 2024թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված) ծախսային պարտավորությունների գծով ծրագրերի/միջոցառումների (օրինակ՝ ծառայությունների) և/կամ շահառուների շրջանակի ընդլայնմանը՝ այսինքն, երբ հաստատված ծառայությունների շրջանակից դուրս առաջարկվում է մատուցել նոր ծառայություններ և/ կամ հաստատված ծառայությունները տարածել շահառուների նոր խմբերի վրա:

Անհրաժեշտ է համառոտ նկարագրել ծախսային նոր նախաձեռնությունները և ինչպես են դրանք նպաստելու պետական մարմնի առաքելության, ընդհանուր նպատակների և գերակայությունների իրագործմանը: Այդ նպատակով անհրաժեշտ է նկարագրել նոր նախաձեռնություններից բխող ծրագրերից/միջոցառումներից յուրաքանչյուրի գծով նպատակները և թիրախային վերջնական արդյունքները և թե ինչպես են դրանք նպաստելու ՀՀ կառավարության ծրագրով սահմանված կոնկրետ նպատակների և քաղաքականության թիրախների ապահովմանը:

Այն դեպքում, երբ նոր նախաձեռնությունն առնչվում է միջոցառման(խաչվող) առանձին քաղաքականությունների նպատակների հետ, ինչպիսիք են (i) (i) գենդերային քաղաքականությունը և (ii) կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականությանն ուղղված ծրագրերը, և ԼՂ բռնի տեղահանվածներին աջակցության ծրագրերը, նկարագրել, թե նոր նախաձեռնության շրջանակներում իրականացվող միջոցառումն ինչպես է նպաստելու համապատասխան քաղաքականության նպատակ(ներ)ի իրագործմանը: Դրանք այն քաղաքականություններն են, որոնց արդյունքներն ու դրանց

շրջանակներում իրականացվող միջոցառումներն առնչվում են մեկից ավելի ոլորտների, նպատակների և գերատեսչությունների հետ և առկա ծրագրային կառուցվածքը հնարավորություն չի տալիս արդյունավետ կերպով առանձնացնել այդ քաղաքականություններին ուղղված ծախսերը:

Նշված տեղեկատվությունը յուրաքանչյուր նոր նախաձեռնության մասով անհրաժեշտ է ներկայացնել Հավելված 2-ի Ձևաչափ 2-ում ներկայացված աղյուսակին համապատասխան, ինչպես նաև ամփոփ տեսքով՝ Հավելված 2-ի Ձևաչափ 1-ում ներկայացված աղյուսակին համապատասխան:

Անհրաժեշտ է բացատրել, թե նոր նախաձեռնությունների իրականացումը ինչ նոր բյուջետային ծրագիր (ծրագրեր) և միջոցառումներ կպահանջի կամ գոյություն ունեցող ծառայությունների գծով ինչ նոր շահառուների խմբեր կընդգրկի: Պետք է նկարագրել նաև, թե ինչպես են դրանք նպաստելու պետական մարմնի առաքելության և ՀՀ կառավարության ընդհանուր նպատակների և գերակայությունների իրագործմանը (կատարել հղումներ համապատասխան փաստաթղթերին): Եթե նոր նախաձեռնությունները պայմանավորված են օրենսդրության փոփոխությամբ կամ ռազմավարական և քաղաքական որոշումներով, ապա անհրաժեշտ է հղում կատարել համապատասխան փաստաթղթերին (դրույթներին):

Այն դեպքերում, երբ նախատեսվում է նոր ծրագրի իրականացում (այլ ոչ թե գոյություն ունեցող ծրագրերի ընդլայնում), ապա անհրաժեշտ է մանրամասն շարադրել այն ենթադրությունները, որոնք հիմնավորում են տվյալ որոշումը:

Եթե նախատեսվում է նոր նախաձեռնություն գործող պարտավորությունների դադարեցման կամ կրճատման հաշվին, սակայն պահանջվում է համապատասխան նոր իրավական հիմքերի ստեղծում և չի կարող կատարվել միայն պետական մարմնին գործող օրենսդրությամբ վերապահված իրավասության շրջանակներում իրականացվող ներքին ընթացակարգերի միջոցով, ապա անհրաժեշտ է ներկայացնել համապատասխան բացատրություններ և հիմնավորումներ:

Նոր նախաձեռնություններից յուրաքանչյուրի վերաբերյալ տեղեկատվությունը պետք է ներկայացնել առանձին տեսքով՝ սույն ցուցումներին կից՝ Հավելված 2-ի Ձևաչափ 2 - ում ներկայացված ձևաչափին համապատասխան (յուրաքանչյուր նոր նախաձեռնության համար անհրաժեշտ է կրկնօրինակել Հավելված 2-ի Ձևաչափ 2-ը):

Նոր նախաձեռնությունների (ներառյալ այլընտրանքների) գծով ծախսակազմումներն անհրաժեշտ է իրականացնել սույն ցուցումների բաղկացուցիչ մաս հանդիսացող «Բյուջետային ծրագրերի ծախսակազմման ընդհանուր ուղեցույցներին» համապատասխան: Մասնավորապես ծախսակազմումն իրականացնելիս անհրաժեշտ է հստակ ներկայացնել համապատասխան այլընտրանքներից յուրաքանչյուրի գծով ծախսերի օբյեկտները, առնչվող ծախսերն ու դրանց դասակարգումները և ծախսերի վերգրման համար կիրառվող մոտեցումները: Ծախսակազմման փաստաթղթերը/Ֆայերը պետք է հանդիսանան հայտի բաղկացուցիչ մասը և հայտի հետ միասին սահմանված կարգով ներայացվեն ՀՀ ՖՆ:

Այն դեպքերում, երբ նոր նախաձեռնությունների գծով ենթադրվում է ծառայությունների կամ շահառուների փոքր շրջանակի համար փորձնական ծրագրերի իրականացում, ապա հայտում անհրաժեշտ է կատարել նշում այդ մասին:

Նոր նախաձեռնությունների գծով ՄԺԾԾ ժամանակահատվածում առաջարկվող ծախսերն ու ակնկալվող արդյունքներն անհրաժեշտ է ներկայացնել նաև ամփոփ տեսքով՝ սույն ցուցումներին կից՝ Հավելված 2-ի Ձևաչափ 1-ին համապատասխան: Ծրագրերի/միջոցառումների գծով ամփոփ ծախսերն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական և գործառական դասակարգումների մանրամասների անհրաժեշտ է ներկայացնել՝ սույն ցուցումներին կից՝ Հավելված 4-ի ձևաչափերին համապատասխան: Նոր նախաձեռնությունների համար նշված ձևաչափերն օգտագործելիս դրանցում չպետք է ներառվեն գոյություն ունեցող ծրագրերի/միջոցառումների (ծախսային պարտավորությունների) գծով ծախսերը:

Անհրաժեշտ է թվարկել նոր նախաձեռնությունների ֆինանսավորման հավանական այլընտրանքային աղբյուրները՝ այլ աղբյուրներ կամ խնայողություններ այլ ծրագրերից: Ֆինանսավորման այլ հավանական աղբյուրի առկայության կամ այլ ծրագրերում խնայողություններ ակնկալելու դեպքում, այդ տեղեկատվությունն անհրաժեշտ է ներկայացնել առանձին աղյուսակում՝ սույն ցուցումներին կից՝ Հավելված 2-ի Ձևաչափ 2 - ում:

Նոր նախաձեռնությունների գծով ծախսերի վերաբերյալ անհրաժեշտ է ներկայացնել ամփոփ տեղեկատվություն՝ սույն ցուցումների Հավելված 2-ի Ձևաչափ 1 - ում ներկայացված աղյուսակին համապատասխան: Հավելված 2-ի Ձևաչափ 2 - ում ներկայացված նոր նախաձեռնությունների վերաբերյալ տեղեկատվությունն անհրաժեշտ է ներկայացնել ըստ դրանց ֆինանսավորման առաջնահերթությունների:

Վերաբերելի չէ

4. ՈՉ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Համառոտ ներկայացնել հայտատու մարմնի, ինչպես նաև վերջինիս ենթակայությամբ գործող պետական կազմակերպությունների կողմից 2025-2027թթ. իրականացվելիք ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում սպասվող եկամուտների աղբյուրները (բացառությամբ պետական բյուջեից ստացվող եկամուտների)՝ սույն ցուցումներին կից՝ Հավելված 6 - ում ներկայացված ձևաչափերին համապատասխան:

Վերաբերելի չէ

5. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՅՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Հանձնաժողովի կողմից Կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակման և միջոցառումների իրականացման աշխատանքները նպաստելու են մարզերում իրազեկվածության բարձրացմանը: Հանձնաժողովը մշտապես կարևորել է հակակոռուպցիոն կրթական ծրագրեր իրականացնելիս մանկավարժների և դպրոցախառակ երեխաներ ունեցող ծնողների դերը, այդ իսկ

պատճառով՝ վերջիններս ընտրվել են որպես թիրախային խումբ՝ Երևանում և ՀՀ մարզերում իրականացվող իրազեկման հանդիպումներ իրականացնելիս:

ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1871-Լ որոշմամբ հաստատված ՀՀ 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությամբ՝ որպես ռազմավարական 3-րդ նպատակ սահմանված է հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկման կառուցակարգերի կատարելագործումը, ըստ որի՝ Հակակոռուպցիոն կրթության և իրազեկման ուղղությամբ պետության կողմից ձեռնարկվող միջոցառումները պետք է ուղղված լինեն նրան, որ հասարակության յուրաքանչյուր անդամ ուղղակիորեն կամ անուղղակիորեն նպաստի իրավունքի գերակայության սկզբունքի հետևողական կենսագործմանը:

6. ՄԻՋՈՒՈՐՏԱՅԻՆ (ԽԱՉՎՈՂ) ԲՆՈՒՅԹԻ ԱՌԱՆՁԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Նկարագրել, թե ինչպես են բյուջետային ծրագրերը/միջոցառումները նպաստելու միջոցառումներին (խաչվող) բնույթի առանձին քաղաքականությունների նպատակների և գերակայությունների իրագործմանը: Դրանք այն քաղաքականություններն են, որոնց արդյունքներն ու դրանց շրջանակներում իրականացվող միջոցառումներն առնչվում են մեկից ավելի ոլորտների, նպատակների և գերատեսչությունների հետ և առկա ծրագրային կառուցվածքը հնարավորություն չի տալիս արդյունավետ կերպով առանձնացնել այդ քաղաքականություններին ուղղված ծախսերը:

Մասնավորապես, անհրաժեշտ է առանձին ներկայացնել բյուջետային հայտում ներառված բոլոր այն ծրագրերն ու միջոցառումները, որոնք ուղղված են կամ նպաստում են հետևյալ խաչվող քաղաքականությունների ապահովմանը.

- (i) գենդերային քաղաքականություն
- (ii) կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականությանն ուղղված միջոցառումներ
- (iii) ԼՂ-ից բռնի տեղահանվածներին աջակցության միջոցառումներ:

Վերոհիշյալ յուրաքանչյուր քաղաքականությանն առնչվող ծրագրերն ու միջոցառումներն ամփոփ ներկայացնել առանձին հավելվածով՝ սույն ցուցումներին կից՝ Հավելված 9 -ում ներկայացված ձևաչափերին համապատասխան:

Հավելվածում պետք է ներկայացնել նաև համապատասխան բացատրական-վերլուծական տեղեկատվություն, համապատասխան խաչվող քաղաքականության նպատակների և ակնկալվող արդյունքների վերաբերյալ, ինչպես նաև այն մասին, թե ինչպես են ներկայացված ծրագրերն ու միջոցառումները նպաստելու այդ նպատակների իրագործմանը:

Հավելվածում անհրաժեշտ է ներառել հայտով ներկայացված՝ համապատասխան քաղաքականություններին առնչվող ինչպես գոյություն ունեցող, այնպես էլ նոր նախաձեռնություններ հանդիսացող ծրագրերն ու միջոցառումները:

Վերաբերելի չէ

7. ԱՐՏԱՔԻՆ ԱՂԱՅՈՒՐՆԵՐԻՑ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՍՏԱՅՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԸ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Համառոտ նկարագրել արտաքին աղբյուրներից՝ պետական բյուջե ստացվող վարկերի և դրամաշնորհների հաշվին իրականացվելիք ծրագրերը/միջոցառումները և այդ ֆինանսական ռեսուրսների ստացման աղբյուրները (առանձին ցույց տալով նաև այդ ծրագրերի/միջոցառումների գծով ՀՀ կառավարության համաֆինանսավորման չափաքանակները): Այդ առումով, ի լրումն սույն օրինակելի ձևի 3, 4 և 5-րդ կետերով պահանջվող տեղեկատվության, այդ ծրագրերի/միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունն անհրաժեշտ է ամփոփ ձևով ներկայացնել նաև սույն ցուցումներին կից՝ Հավելված 7-ի Ձևաչափ 1-ին, 2 –ին և 3-ին համապատասխան:

Ծրագրերի նկարագրությունները պետք է լինեն բովանդակային՝ համապատասխան հաշվարկներով հիմնավորված:

Բովանդակային բացատրագրերում առնվազն պետք է ներառվեն ծրագրերի գծով ըստ գնումների պլանի ընթացիկ (ԾԻԳ-երի պահպանման ծախսերի՝ ներառյալ հաստիքացուցակով նախատեսվող աշխատավարձի ֆոնդի և աշխատողների թվաքանակի, խորհրդարարական աշխատանքների և այլ ընթացիկ ծախսերի) և ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի (այդ թվում՝ ըստ օբյեկտների շինարարության, նախագծանախահաշվային փաստաթղթերի առկայության և ապրանքների ձեռքբերման մրցույթների փուլերի, և այլ կապիտալ ծախսերի) ընթացքի և կանխատեսումների վերաբերյալ ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշներով տեղեկատվական և վերլուծական դրույթներն ըստ ծրագրերի բաղադրիչների, այդ թվում՝

ա/ շինարարական և այլ աշխատանքների գծով՝ իրականացվելիք աշխատանքներն ըստ օբյեկտների, նախագծանախահաշվային փաստաթղթերի առկայությունը կամ բացակայությունը, մրցույթի ընթացքը, կապալի պայմանագրի առկայությունը, շինարարական աշխատանքների ավարտը և կանխատեսումների հիմքում դրված ենթադրությունները,

բ/ ապրանքների և նյութերի ձեռքբերման գծով՝ ապրանքների տեսականին, անհրաժեշտությունը և նպատակը, ձեռքբերման մրցույթի ընթացքը, կանխատեսման հիմքում դրված ենթադրությունները,

գ/ տեխնիկական աջակցության և խորհրդատվության գծով՝ ձեռքբերման անհրաժեշտությունը և նպատակը, նախատեսված ծախսի հաշվարկ-հիմնավորումը, տեխնիկական առաջադրանքների (TOR-երի) առկայությունը, մրցույթի ընթացքը, ծառայության մատուցման ավարտը, կանխատեսման հիմքում դրված ենթադրությունները,

դ/ կառավարման կամ ԾԻԳ-երի պահպանման ծախսերի գծով՝ նախատեսված ծախսերի անհրաժեշտությունը, նպատակը, ուղղվածությունը և համապատասխան պարզաբանումները:

Ի լրումն այդ տեղեկատվության, անհրաժեշտ է ներկայացնել նաև տվյալ ծրագրերն իրականացնող գրասենյակների (ԾԻԳ-երի) պահպանման ծախսերի նախահաշիվները՝

ՖՆ ներկայացվող ձևաչափերին համապատասխան, դրանց հաշվարկ-հիմնավորումներով:

Հաշվարկ-հիմնավորումներում առնվազն պետք է ներառվեն ծախսերի հաշվարկման գործող մեթոդաբանությամբ և նորմատիվներով կոնկրետ հաշվարկները և կանխատեսումների հիմքում դրված սցենարները՝ դրանց վրա ազդող գործոնային գնահատումներով և պարզաբանումներով՝ 2026/2025թթ. համադրմամբ և շեղումների դեպքում՝ համապատասխան պարզաբանումների ներկայացմամբ, այդ թվում՝

- աշխատողների թվաքանակը, ըստ պաշտոնների աշխատավարձի ամսեկան դրույքաչափերը և աշխատավարձի ֆոնդի հաշվարկը, համադրումը ընթացիկ տարվա ցուցանիշների հետ և փոխկապակցումը ծրագրի իրականացման ընթացքի հետ,

- ծառայությունների (գործառնական և բանկային, էներգետիկ, կոմունալ, կապի, ապահովագրության, վարձակալության և այլն) ձեռքբերման ծախսերի հաշվարկը, համադրումները և փոփոխության դեպքում՝ դրանց գործոնային ազդեցության գնահատումները և պարզաբանումները,

- գործուղումների և շրջագայությունների (ներքին և արտաքին) ու գործուղվող անձանց քանակը, մեկնման վայրերը, անհրաժեշտությունը և նպատակը, գործուղման ծախսերի հաշվարկ-հիմնավորումները, համադրումները և կապը ծրագրի իրականացման տվյալ փուլի հետ,

- այլ պայմանագրային ծառայությունների (վարչական, համակարգչային, տեղեկատվական, մասնագիտական զարգացման, կառավարչական, ներկայացուցչական և այլն) անհրաժեշտությունը, պահանջվող գումարների հաշվարկները, մրցույթների ընթացքի, պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվությունը և պարզաբանումները,

- ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերի գծով (շենքեր և մեքենաներ) հաշվարկները, նորոգման բնույթը և ծավալը, և այդ շրջանակներում կատարվող ձեռքբերումների հիմնավորումը,

- նյութերի (գրասենյակային, վերապատրաստման, տրանսպորտային) և այլ ծախսերի գծով հաշվարկները և համադրումները:

Վերաբերելի չէ

8. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Հանձնաժողովի Կոռուպցիայի կանխարգելման համակարգի զարգացման ապահովում ծրագրի շրջանակներում ֆինանսական պահանջների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը ներկայացված է Հավելված 8-ում:

9. ՀԱՅՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

Ներկայացնել հայտի հետ կապված հիմնական ռիսկերը և դրանց վերլուծությունը: Մասնավորապես, ներկայացնել հայտի (ըստ առանձին ծրագրերի) հիմքում ընկած ենթադրությունների իրատեսականության հետ կապված հիմնական ռիսկերը (օրինակ ծախսային գործոնների գծով չճշտված ենթադրություններ, կամ ծառայությունների նկատմամբ պահանջարկի մակարդակի չճշտված կանխատեսումներ և այլն), որոնք

կարող են բացասաբար ազդել հայտով ներկայացված նպատակների և արդյունքների ձեռք բերման վրա:

Ռիսկերի վերլուծությունը պետք է պարունակի հնարավոր ռիսկերի նկարագրությունը, դրանց հանդես գալու հավանականությունը, վերջիններիս հնարավոր ազդեցությունը նպատակների և արդյունքային ցուցանիշների վրա, ինչպես նաև այդ ռիսկերի կանխման/հաղթահարման հնարավոր ուղիները: Ռիսկերի վերլուծության վերաբերյալ տեղեկատվությունն անհրաժեշտ է ամփոփել սույն մեթոդական ցուցումներին կից՝ Հավելված 10 -ում ներկայացված ձևաչափին համապատասխան:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված N 3. Բյուջետային ծրագրերի և ակնկալվող արդյունքների ներկայացման ձևաչափ

Պետական մարմնի անվանումը՝	ԿՈՌՈՐՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
---------------------------	--------------------------------------

ՄԱՍ 1. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Հիմնական ռազմավարական նպատակները և գերակա վերջնական արդյունքները²
2. Բյուջետային ծրագրերում կատարվող հիմնական փոփոխությունները³
3. Կապիտալ թնույթի հիմնական միջոցառումները⁴
4. Ֆինանսական ակտիվների կառավարմանն անչվող միջոցառումները⁵

ՄԱՍ 2. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՐՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Ծրագրային դասիչ ⁶		Ծրագիր/Միջոցառում	2023թ. (փաստացի) բազային տարի (հազ. դրամ)	2024թ (սլան) (հազ. դրամ)	2025թ (հազ. դրամ)	2026թ (հազ. դրամ)	2027թ (հազ. դրամ)
Ծրագիր	Միջոցառում ⁹						
Ծրագիր		Ծրագրի անվանումը՝					
		Կոռուպցիայի կանխարգելման համակարգի զարգացման ապահովում					
		Ծրագրի նպատակը՝					
		Կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության միասնական համակարգի արդյունավետ կիրառման ապահովումը					
		Վերջնական արդյունքի նկարագրությունը՝					

1181	×	Ապահովել կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության ինստիտուցիոնալ, ինչպես նաև անհատական հաշվեքվովողականության արդյունավետ մեխանիզմների կիրառումը: Մասնավորապես՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության և Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի գնահատականներով ապահովել օրենսդիր, գործադիր և դատական իշխանության ներկայացուցիչների շահերի բախման, վարքագծի կանոնների, անհամարեղելիության, գույքի, եկամուրների համար հաշվեքվովողականությունն ու պարասխանավորությունը:	380940.90	412826.50	442218.50	446999.20	449694.60
Ծրագրի միջոցառումներ ⁸							
Ընթացիկ միջոցառումներ							
×	11001	Միջոցառման անվանումը՝	371821.50	385936.00	415230.30	419915.00	422610.40
		Կոռուպցիայի կանխարգելում և բարեվարքության համակարգի զարգացում					
		Միջոցառման նկարագրությունը՝					
		Օրենսդրական փոփոխությունների և ինստիտուցիոնալ նոր համակարգի ներդնում և կատարելագործում, մասնավորապես՝ «Կոռուպցիոն ռիսկերի բացահայտման, վերլուծության եվ կառավարման» համակարգի ներդրում և գործարկում, շահերի բախման, այլ սահմանափակումների, անհամարեղելիության վերահսկողության և հաշվեքվովողականության արդյունավետ մեխանիզմների խթանում օրենսդիր, գործադիր և դատական իշխանության ներկայացուցիչների շրջանում, բարեվարքության ուսումնասիրություն և գնահատում անցնող սուբյեկտների կազմի ընդլայնում:					
		Միջոցառման տեսակը ¹⁰					
		Ծառայությունների մատուցում					
....							
Ընթացիկ միջոցառումներ							
×	11002	Միջոցառման անվանումը՝	9119.40	26890.50	26988.20	27084.20	27084.20
		Կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակման և միջոցառումների իրականացման աշխատանքներ					
		Միջոցառման նկարագրությունը՝					
		Ձևավորել կոռուպցիայի դեմ պայքարի և կանխարգելման արդյունավետ կիրառմանն անհրաժեշտ կրթական դիսցիպլիններ, դրանք ներդնել կրթության համակարգ և ապահովել հակակոռուպցիոն մասնագիտացված կրթություն:					
		Միջոցառման տեսակը ¹⁰					
		Ծառայությունների մատուցում					
....							
Կապիտալ միջոցառումներ							

x	31001	Միջոցառման անվանումը՝	0.00	0.00	0.00	0.00	0.00
		Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում					
		Միջոցառման նկարագրությունը՝					
		Հանձնաժողովի կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում					
		Միջոցառման տեսակը՝					
		Պետական մարմինների համար տեխնիկական հագեցվածության ապահովում					
....							
Հանրային սեփականության կառավարման միջոցառումներ							
x		Միջոցառման անվանումը՝					
		Միջոցառման նկարագրությունը՝					
		Միջոցառման տեսակը՝					
....							
Ֆինանսական ակտիվների կառավարման միջոցառումներ							
x		Միջոցառման անվանումը՝					
